



**ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԱՆՁՐԵՆԵՐ**

Սիրելի ընթերցող,

Վերի խօսքը Եզեկիելի մարգարեության գիրքէն առնուելով վերածուած է գեղեցիկ հոգեւոր երգի մը, որուն կրկներգը կ'ըսէ. «... կաթիլներ գաթյ կ'իյնան արդ, տարափներ տուր, Տէր, մեզի...»:

«Լրատու»-ի վերջին էջին կայ երկար ցանկ մը նուիրատուութիւններու. կաթիլներ եւ տարափներ: Հեռու մեզմէ նիւթապաշտութեան որեւէ դրսեւորում. ՀԱԳ-ի իսկական օրհնութիւնները նիւթէն անդին են: Այդուհանդերձ, նիւթական աշխարհին մէջ ազնիւ մարդոց բարի կամքէն բխած նիւթը կը վերածուի հոգեկերտման գործիքի, մանաւանդ կրթական ասպարէզին մէջ:

Ցանկը արպտողները պիտի նկատեն յաճախակի կրկնումը Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան, որ իբրեւ հաստատութիւն կը հանդիսանայ ՀԱԳ-ի մեծագոյն բարերարը. ատելի՛ն՝ սրտակից բարեկամը: Երկւոր է ԱՀԱԸ-ի ծառայութեանց ցանկը հարիւր եւ ատելի տարիներէ ի վեր. այս սինակը տեղը չէ թուարկելու այն բարեգործութիւնները, որ կատարած է Ընկերակցութիւնը: Էականը փաստն է. կաթիլներէ եւ տարափներէ գոյացած նիւթական բարիքը վերածել օրհնութեան՝ աշակերտին, ուսուցիչին, կարիքատիրին, մանուկին ու երիտասարդին կեանքին մէջ ու կեանքին համար:

Օրհնութեան անձրեւները (տարափներ, թէ կաթիլներ) կ'ոռոգեն այն արտը, ուր կը ցանուին վաղուան ատոգը հունձքին սերմերը արդէն 100 տարիէ ի վեր, նոյնը՝ զայիք ժամանակներուն մէջ...:

Ա. Ի. Իրիկյան

**ԲԱՐԵՐԱՐ ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
17.270 ՏՈՒՆԻ ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՅԱՏԿԱՑՈՒՄԸ**

Երկարամեայ նախկին աշակերտ, բարերար տիար Ռաֆֆի Մանուկեան 2022-2023 կրթական տարեշրջանի «Ռաֆֆի Մանուկեան կրթաթոշակի ֆոնտ»-ի իր տարեկան յատկացումը՝ 17.270 տուար, 88 աշակերտի որպէս կրթանպաստ, փոխանցեց դպրոց:

Երախտագէտ տիար Մանուկեանի գործնական եւ յարատեւ քաջալերանքը դպրոցին, բարձրօրէն կը գնահատենք եւ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք:

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

5 Փետրուար 2023-ը շատ կարեւոր օր էր դպրոցի պատմութեան համար: Այդ օր, յատուկ գոհաբանական պաշտամունքով մեկնարկը տրուեցաւ ՀԱԳ-ի հարիւրամեակի տօնակատարութիւններուն: Պաշտամունքին մասնակցեցան վերապատուելի դոկտ. Փօլ Հայտօսթեան (յանուն ՄԱՀԱԵՄ-ի), վեր. Նշան Պազալեան (յանուն ԱՀԱԸ-ի), պատուելի Ժիրայր Ղազարեան (յանուն Հ.Ա. առաջին եկեղեցւոյ), տիար Ներսէս Պաղտոյեան (յանուն հոգաբարձութեան) եւ տնօրէն դոկտ. Արմէն Իրնէշլեան: Հոգեւոր երգերուն նուագակցութիւնը, ինչպէս նաեւ նախանուագն ու վերջանուագը կատարեց Պէյրութի սիմֆոնիք նուագախումբը, խմբավարութեամբ մայեսթրօ Կարօ Աւեսեանի (1998-ի շրջ.), որ նոյնպէս մշակած էր



ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱԳ-Ի ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

«Գոհացե՛ք Տերոջմեն, վասնզի բարի է, վասնզի անոր ողորմութիւնը յաւիտեան է»:

Սաղմոս 136.1

Հայ Աւետարանական Գոլէճի դարադարձին, դիտելով Մայր Կրթօճախի մարտահրաւերներով, յաջողութիւններով եւ տաճնապներով լի անցեալն ու ներկան, կ'անդրադառնանք այն օրինութեան ու սիրոյն, որոնց շնորհիւ այս կրթօճախը հասաւ իր հարիւրերորդ տարիին եւ առ այդ մեր անհուն գոհաբանութիւնն ու անսահման երախտիքը կը յայտնենք...

Մեր ԱՄԵՆԱԿԱԼ ՏԻՐՈՋ, որուն հովանին անսահման է ու ողորմութիւնը՝ յաւիտեանական:

Մեր ԿՈՉՈՒՄԻՆ, որ երկնատուր պարգեւ է ու գիտակից յանձնառութիւն:

Մեր ԵԿԵՂԵՑԻՆ, որուն առաքելութեան հիմնասիւններէն է կրթութեան հովանաւորութիւնը:

Մեր ԵՐԿՐԻՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻՆ, որ տաճնապներու մէջ տոկալու եւ յուսալու յարատեւ յիշեցում է:

Մեր ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, որ մեր ինքնութեան ակունքն ու ազգային երազներու մեկնակետն է:

Մեր ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒՄ, որոնց ձեռքբերումները հպարտութեան առիթ են, իսկ նուիրումը Մայր Կրթօճախին՝ օրինակելի:

Մեր ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒՄ, որոնց պայծառ տեսիլքը առայսօր մեզի ներշնչում է ու մեր գնացքին՝ փարոս:

Մեր ՆԱԽԿԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՈՒՄ, որոնք հաստատակամօրէն առաջնորդեցին այս նաւը ալեկոծումներէ ու դեռ կը նաւարկեն դէպի նորանոր ափունքներ:


Մեր ՆԱԽԿԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅ ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒՄ, որոնց աջալուրջ հսկողութեամբ ՀԱԳ-ը դարձաւ ու է որակաւոր կրթութիւն ջամբող ապահով ու յուսալի միջավայր:

Մեր ՆԱԽԿԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՄ, որոնց նուիրումը անուրանալի է ու հիմնատարը՝ դպրոցի առաջդիմութեան:

Մեր ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՄ, որոնք դպրոցին կենսատու շունչն են, ու յոյսը՝ մեր ապագային:

Մեր ՆԱԽԿԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅ ԾՆՈՂԱՅ, որոնց վստահութիւնը մեր յենարանն է ու գոյատեւման երաշխիքը:

Մենք՝ Պէյրութի Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ հովիւ, Միացեալ ժողով եւ ժողովուրդ, Հայ Աւետ. Գոլէճի հոգաբարձուներ, տնօրէն եւ պատուակալ տնօրէն, ուսուցիչներ, պաշտօնեաներ, ծնողք, օժանդակ մարմիններու անդամներ եւ աշակերտներ, մեր անհուն գոհունակութեան կը միացնենք մեր վճռական յանձնառութիւնը շարունակելու դպրոցին հարիւրամեայ երթը, հաւատարիմ՝ անոր առաքելութեան ու աւանդներուն, նոր օրերու տեսիլքով ամրապնդուած:



զանոնք: Երկրորդականի աշակերտներէ կազմուած երգեցիկ խումբը երգով մը միացաւ նուագախումբին:

Պաշտամունքին ներկայ էին ՄԱՀԱԵՄ պատուակալ նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեան, Լիբանանի հայ առաքելական թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեան, գաղութային մարմիններու եւ դպրոցներու ներկայացուցիչներ, շրջանաւարտներ, ծնողք եւ ՀԱԳ-ի բարեկամներ:

Պաշտամունքին մանրամասն թղթակցութիւնը կարելի է գտնել «Ազդակ» օրաթերթի 7 Փետրուար 2023-ի թիւին մէջ, կամ հետեւելով սոյն յղումին.

<https://www.aztagdaily.com/archives/572129>

Իսկ ամբողջ պաշտամունքը կարելի է դիտել հետեւեալ յղումով.

<https://www.youtube.com/watch?v=wlmCkVjjj-Q>



ԴԱՇՆԱԿԱԿԱՐ ՍԷՐՈՒԹ ԳՐԱԾԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

16 Մարտ 2023-ին պատիւ ունեցանք հիւրընկալելու հանրաճանաչ դաշնակահար եւ յօրինող Սէրուօ Գրաճեանը, որ Գանատայէն Լիբանան ժամանած էր Համազգայինի 95-ամեակին առթիւ կազմակերպուած նուագահանդէս մը տալու: Գրաճեան որդին է ՀԱԳ-ի 1966-ի շրջանաւարտ Սոնիա Չէօրէքճեանի:

Ան դպրոցի հարիւրամեակի ոսկեմատեանին մէջ գրառում կատարեց, ուր ի միջի այլոց նշեց, «... ուրախ եմ, որ հարիւրամեակի սեմին, դպրոցը պատնէշի վրայ է եւ հակառակ բոլոր դժուարութիւններուն եւ մարտահրաւերներուն կը շարունակէ իր առաքելութիւնը պատրաստելու յաջորդ ուսումնատեւնչ եւ հայասեր սերունդը: Պատիւ էր գտնուիլ այս դպրոցին մէջ»:

Գրաճեանի կ'ընկերանար Համազգայինի կեդր. վարչութեան ստենապետ պարոն Զաքար Քէշիշեան:





ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈՎԻԻ ԺԻՐԱՅՐ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Կիրակի 26 Փետրուարին, յատուկ պաշտամունքի ընթացքին, Հայ աւետ. առաջին եկեղեցւոյ հովիւ պատուելի Ժիրայր Ղազարեան ձեռնադրուեցաւ եւ ստացաւ վերապատուելի կոչում:

Կը շնորհաւորենք մեր ժրաջան վերապատուելին եւ կը մաղթենք բարի ծառայութիւն:

Մեր խնդակցութիւնը կ'ուղղենք նաեւ Առաջին եկեղեցւոյ պատասխանատու մարմիններուն եւ ժողովուրդին:



ՀԲԱԴՐՈՒՄ

ՎԱՍՏԱԿԱԽՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆԵՐՈՒ

Կիրակի, Մարտ 12-ին Լիբանանի մէջ գործող հայ աւետարանական վարժարաններու 6 այլ ուսուցիչներու կողքին, ՀԱԳ-ի երեք ուսուցիչներ՝ պարոն Հաննա Պշարա եւ տիկնայք Նա'ամաթ Էլ Խաթիպ եւ Սոնա Մուղալեան ՄԱՀԱԵՄ կրթական խորհուրդին կողմէ շքադրուեցան «երկարամեայ ծառայութեան» ոսկեայ մետալով: ՀԱԳ-էն յայտագիրին մաս կազմեցին 12-րդ դասարանի շնորհալի աշակերտ Հրակ Մամիկոնեան, որ ասմունքեց Վահան Թէքէանի «Հաշուեյարդար»ը եւ պր. Հ. Պշարա, որ արաբերէնով ներկայացուց պարգեատրուած ուսուցիչներու շնորհակալական ուղերձը:



Ջերմ շնորհաւորանքներ մեր վաստակաւոր ուսուցիչներուն:

«Մշակը արժանի է իր վարձքին»:



ՀԱՅՎԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԳՈՀԱՐ ԵՎ ԱԶԴԱԿ



Չորեքշաբթի, 8 Մարտ 2023-ին Հայկական ակումբի աշակերտները այցելեցին ԳՈՀԱՐ գրադարան, ուր ծանօթացան գրադարանի հիմնադրութեան պատմութեան, հարուստ, տեսակաւոր եւ արժէքաւոր երգարաններու ու բառարաններու հաւաքածոներուն: Նաեւ դիտեցին եւ փորձեցին գիրքերու նորոգման եւ կազմութեան աշխատանքները: Այցելութեան աւարտին ստացան յատուկ նուէրներ Խաչատուրեան եղբայրներուն կողմէ: Ապա այցելեցին «Ազդակ» օրաթերթի խմբագրատունը, ուր պատասխանատու օրհորդ Արշո Պալեան հետաքրքրական ձեւով բացատրեց օրաթերթի կազմութեան, նիւթերուն եւ աշխատանքի ձեւերուն մասին:



ՄԵՔԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄՐՅԱԼՔ

ՀԱԳ-ի 10-րդ դասարանի աշակերտուհի Սերլի-Ռոզի Շահինեան 4 Մարտի 2023-ին Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանէն ներս կազմակերպուած «Պահենք մեր այբուբենը» խորագրով հայերէն մեքենագրութեան մրցանքին երրորդ դիրքը զրաւեց:

Մրցանքը կազմակերպուած էր ՀԵՀՈՄ-ի հիմնադրութեան 60-ամեակին առիթով:



ՎԱՐԴԱՆԱՆՏ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 17 Փետրուարին աշակերտները միասնաբար նշեցին Սրբոց Վարդանանց տօնակատարութիւնը, խմբային արտասանութիւններով եւ խմբերգերով:

Օրուան պատգամը փոխանցեց արժ. Տ. Ղետնդ քին. Լոշխաճեան:



ՍԵՐԵՆՈՒ ԳՈՒՐՈՒՃԵԱՆ
Համագրային նկարչութեան մրցանքի մրցանակակիր

Կը շնորհաւորենք մեր սիրելի աշակերտուհիները:



ԲԱՐԵԿԵՆԴԱՆ



100-ՐԴ ԳԱՐՈՒՆ



ՈՒՄՆԵՅՉԱՅ ՕՐ



ՏԱՊԱՆ



ՄԻՈՒՆԵ ՀԱՄԻՊՈՒՄԻԱՐ ԿԻՐՅՔ



ԿԱՐԿԱՆԴԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ



ԱՊՈՒՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ



ՄԱՆԿԱՊԱՏՐՏԵՐԸ՝ MCDONALD'S



ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐԶ՝ ՎԱՋԵՒՆ ԵՒ ԷՍՍԱՆՈՒՓԵԼԻՆ



PARCOURS DES SAVEURS

Տոքթ. ՆԱԶԱՐԷԹ ՏԱՐԱԳՃԵԱՆ (1970-ի շրջ.) սախագահ ընտրուեցաւ Հայ աւետարանական համաշխարհային խորհուրդին, 20-21 Հոկտեմբեր 2022-ին Փարանքի մէջ տեղի ունեցած տարեկան ժողովին:



Օրդ. ՓՈԼԻՆ ՄԱՂՐԵԱՆ (1972-ի շրջ.) Ճինիշեան յիշատակի ձեռնարկի տնօրէնութեան ջանք փոխանցեց իր յաջորդին, 19 Յունուար 2023-ին Պուրճ Համնուտի Հայ կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցոյ սրահին մէջ ընդունելութեան մը ընթացքին: Այդ օր իր 27 տարուայ ծառայութեան համար ստացաւ յատուկ շնորհակալագիր Հայաստանի Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակին անունով: Իսկ Ճ.Յ. Ձեռնարկը որոշեց անոր անունով կոչել Լիբանանի մէջ մասնակներու ամառնային ճամբար մը:



ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն դոկտ. ԶԱԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ (1955-ի շրջ.) «Վանայ ձայն»-ի «Դիմանկար» ծրագրի առաջին հարցազրոյցի հիւրն էր 18 Յունուար 2023-ին: Հոգաբարձութեան ատենապետ Ներսէս Պաղտոյեան (1978-ի շրջ.) եւ տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշեան վկայութիւններ տուին իր մասին: Հարցազրոյցը կարելի է դիտել youtube-ի հետեւեալ կայքէջի վրայ. https://youtu.be/_yVQMX1J6X8


26 Փետրուար 2023-ին Նիւ Ճրրգիի մէջ Թենըֆլայի Ս. Թովմաս եկեղեցոյ «Միսճեան» սրահի բացումը կատարեցին տոքթ. ՅԱՐՈՒԹ եւ տիկ. ՇԱԶԷ (ծն. Խոյրիբեան, 1960-ի շրջ.) ՄԻՃԵԱՆՆԵՐԸ, որոնք բարեբարները եղած են սրահին:

Կազմակերպութեամբ «Ազդակ» օրաթերթի, 22 Փետրուար 2023-ին, հովանաւորութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, տեղի ունեցաւ շնորհանդէսը Կաթողիկոսարանի դիւանապետ, քանաստեղծ ԽԱԶԻԿ ՏԵՏԵԱՆԻ (1980-ի շրջ.) «Երազէն անդին» քանաստեղծական ժողովածոյի Գ. հատորին: Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ նաեւ տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշեան:



ԸՅԴ Արեւմտեան Ամերիկայի կազմակերպութեան 13 – 15 Յունուար 2023-ին Մոնթեպելլոյի Հայ կեդրոնին մէջ գումարուած 56-րդ շրջանային ժողովին նոր կեդրոնական կոմիտէի անդամ ընտրուած է տոքթ. ՀՐԱՅՐ ԳՈՒԹՅՈՒՅԵԱՆ (1983-ի շրջ.):

Երկարամեայ նախկին աշակերտ ՄԻՔԱՅԷՆ ՎԱՅԷՃԵԱՆ եւ ԱՐԱԷՆ ՎԱՅԷՃԵԱՆ (2002-ի շրջ.) Արամէ արուեստի ցուցասրահին մէջ Լիբանանի մէջ Հայաստանի



դեսպանին հովանաւորութեամբ, 16 Դեկտեմբեր 2022-ին, հայրենի նկարիչներու գեղարուեստական գործերու ցուցադրութիւն կատարեցին:

16 Դեկտեմբեր 2022-ին Յ. Պողոսեան թատերասրահին մէջ Համազգայինի «Արեգ» մասնկապատանեկան թատերախումբը ներկայացուց «5-րդ



Եղանակը» երաժշտական թատերգութիւնը, բեմադրութեամբ ՄԻԿԱ ՍՈՂՈՍՈՒՅԵԱՆԻ (1987-ի շրջ.), որ նաեւ հեղինակն էր թատերգութեան:

7 – 9 Դեկտեմբեր 2023-ին Անթիլիասի մայրավանքին մէջ տեղի ունեցած Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային ընդհ. ժողովին մասնակիցներուն մէջ էին Լիբանանի թեմէն ընտրուած պատգամաւոր ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ տոքթ. ԷԼԻ ԹԱՃԵԱՆ, ԱՄՆ-ի Արեւելեան թեմէն պատգամաւոր ԶԱՐՄԱՅՐ ՄԵՐԱԿԵԱՆ (նախկին աշակերտ) եւ Տստեսական յանձնախումբի անդամ ԱՏՈՒ ԹՆՃՈՒԿԵԱՆ (1967-ի շրջ.):

6 Դեկտեմբեր 2022-ի երեկոյեան Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի իրենց անունը կրող նոր դարմանատան պաշտօնական բացումը կատարեցին տէր եւ տիկ. ԱՏՈՒ (1967-ի շրջ.) եւ ՄԵԼԼԱ ԹՆՃՈՒԿԵԱՆ:




Ապու Տապիի մէջ 21 – 24 Նոյեմբեր 2022-ին Creative 961 արուեստի ծրագրին իր մասնակցութիւնը բերաւ նախկին աշակերտ Սաէսթրօ ՅԱՐՈՒԹ



ՅԱԶԷԱՆ ղեկավարելով Լիբանանի սիմֆոնիք նուագախումբը:

Նախկին աշակերտուծի օրդ. ՆՈՐԱ ՊԱՐՈՒԹՃԵԱՆ՝ Փարիզի Դպրոցասէր վարժարանի մանկավարժ եւ ընկերային ծառայող «Ֆրանսահայ հանգստեան տան», հիւրը եղաւ Պուրճ Համնուտի «Պատկեր» հայ մշակոյթի կեդրոնին, 31 Հոկտեմբեր 2022-ին, ուր ներկայացուցեցաւ իր նորատիպը՝ «Ջերօ»:



ԲԱԽՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

- Տիկ. Ալին Չիֆթճեան (ծնեալ Արթինեան, 2010-ի շրջ.) եւ իր ամուսինը բախարաւորուեցան դուարով մը՝ Մաթեա, 24 Փետրուար 2023-ին, Պէյրութ:
- Տոքթ. Հրակ Ժանսպաթեան (2007-ի շրջ.) եւ իր տիկինը բախարաւորուեցան մանչ զաւակով մը՝ Կարէն, 18 Յունուար 2023-ին, Ամերիկա:
- Տիկ. Արին Քերքեզեան (ծնեալ Պաղտոյեան, 2010-ի շրջ.) եւ իր ամուսինը բախարաւորուեցան մանչ զաւակով մը՝ Թէօ-Հրակ, 23 Դեկտեմբեր 2022-ին, Պէյրութ:
- ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ տիկ. Թամար Պչարճեան (ծնեալ Քեարենեան) եւ իր ամուսինը 26 Օգոստոս 2022-ին բախարաւորուեցան դուարով մը՝ Կապրիէլա:
- Տիկ. Մարիա Հենլի (ծն. Եազրճի, 1996-ի շրջ.), իր 7-րդ զաւակը ոնեցած է դուար մը՝ Covenant Rainbow, Հիւսիսային Իրլանդայի մէջ, 8 Մարտ 2023-ին:

ԱՊԱՔԻՆՈՒՄ

• Արագ եւ ամբողջական ապաքինում կը մատուցէր 1953-ի շրջանաւարտ, ՀԱԳ-ի Լիբանանի շրջ. միութեան նախկին արեւնապետ պրն. Յակոբ Ալլըքեանին, որ սրտի տագնապէ մը ետք հանգստեան շրջան մը կը բոլորէ:

Պատմաբան դոկտ. ՎԱՀՐԱՄ ՇԵՄՄԱՍԵԱՆ (1969-ի շրջ.) Նոյեմբեր 2022-ին հրաւիրուած է մաս կազմելու Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտական հիմնարկի «Հայագիտական հարցեր» հանդէսի խմբագրութեան:


Սփիւոքի վերակազմակերպման օրակարգով Արամ Ա. կաթողիկոսի առցանց երրորդ քննարկումին մասնակցած են Փարիզէն ՅՈՎԷԼ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ (1973-ի շրջ.) եւ Անթիլիասէն ԽՍԱԶԿ ՏԵՏԵԵԱՆ (1980-ի շրջ.):

Խաչիկ Տէտէան նաեւ բանախօսն էր Սումկայիթի ջարդի 35-րդ տարելիցի միջարանուանական տօնակատարութեան 26 Փետրուար 2023-ին Ս. Նշան մայր եկեղեցոյ բակին մէջ: Ան նաեւ կատարեց բացման խօսքը Ժիրայր Դանիէլեանի յիշատակի ձեռնարկին 27 Փետրուար 2023-ին Անթիլիասի Մայրավանքին մէջ:

ԻՐԵՆՑ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԳՏԱՆ...



† 1955-ի շրջանաւարտ Վեր. Եսայի Սարմազեան (1937 – 2023), նախկին հովիւ Նոր Ամանոսի եւ Թորոնթոյի Հայ Աւետ. Եկեղեցիներուն եւ հեղինակ «Մորթումներ եւ Մորմոքներ» գիրքին, մահացած է 16 Մարտ 2023-ին Թորոնթոյի մէջ:



† 1953-ի շրջանաւարտուհի, վաստակաւոր կրթական մշակ, հեղինակ «Արմատներուն ձայնը» եւ «Ամբարշարձ ճանապարհ» գիրքերուն՝ օրդ. Լուսին Թապագեան (1934 – 2023) մահացած է 23 Մարտ 2023ին, յետ երկարատեւ հիւանդութեան, Պէյրութի մէջ:



† Նախկին աշակերտ (1952 – 1954) եւ ԱՄՆ-ի 1955-ի շրջանաւարտ կարգի համախմբումին օգրակար եղած եւ ճարտարապետական մարզի մէջ աշխատած Սապեր Հ. Գրանեան (1936 – 2023), մահացած է Լոս Անճելըսի մէջ, 5 Մարտ 2023-ին:



† 1956-ի շրջանաւարտ, Ազգ. գեղեցմանարան յանձնախումբի անդամ, ճարտարապետ, առեւտրական Երուանդ Չէօրէքճեան (1938 – 2023), մահացած է Պէյրութի մէջ, 4 Մարտ 2023-ին:



† Ազգային վարժարանի նախկին տնօրէն եւ վաստակաւոր կրթական մշակ, 1961-ի շրջանաւարտ օրդ. Քնարիկ Տունուրեան (1942 – 2023) մահացաւ 24 Յունուար 2023-ին, Պէյրութ:



† Քիմիական արտադրութեան ամերիկեան մեծ ընկերութեան մը Միջին Արեւելքի եւ Ափրիկէի նախկին տնօրէն, 1964-ի շրջանաւարտ Արա Չալեան (1942 – 2022) Լոս Անճելըսի մէջ մահացած է 1 Դեկտեմբեր 2022-ին:



† Ամերիկայի հայ ակադեմիայի նախկին ընկերակցութեան նախկին նախագահ, 1944-ի շրջանաւարտ տոքթ. Ճորճ Պեղիկեան (1928 – 2022) մահացած է 18 Նոյեմբեր 2022-ին Ֆոլդ Չրրջի (Վերձինիա) մէջ:

ՀԱԳ-Ի ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԷՆ ՅԱԿՈԲ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՀԱԳ-ի 1961 – 1967 շրջանի յարգուած, սիրուած եւ նուիրեալ Կոմիտէի Յակոբ Գասպարեան (1925 – 2019) ոչ եւս է: Իր մահուան գոյժը յայտարարուող իմացանք թողնէ՝ օրդ. Անի Գասպարեանէն:



ՅԱԿՈԲ ԳԱՍՊԱՐԵԱՆ ծնած է Հալէպ: Յաճախած է Հայկազեան ազգ. վարժարանը: Սոֆոմոր վկայական ստացած է Ալեքիփո գոլէճէն, իսկ Պասակատր արուեստից տիտղոսը՝ Պէյրութի ամերիկեան համալսարանէն, 1955-ին: 15 տարի աշխատած է Սայտայի ամերիկեան վարժարանին մէջ իբր կենսաբանութեան եւ քիմիագիտութեան ուսուցիչ, ուր եղած է նաեւ գիտական բաժնի պատասխանատու, մարզանքի ընդհ. պատասխանատու, եւ եօթը տարի այ՛ Կարգապահական յանձնախումբի ատենապետ:

1961 Յուլիսէն 1967 Յունիս եղած է ՀԱԳ-ի տնօրէն: Այդ տարիներուն ան հաստատած է ուսուցչական բաժանմունքներու դրութիւնը, ուսուցչական այլազան յանձնախումբեր, ներառեալ՝ Ուսուցչական խորհուրդը: Նախաձեռնած է աշակերտական ակումբային դրութիւնը եւ քաջալերած՝ անոնց պարբերականները: Հետամուտ եղած է Ամերիկեան համալսարանի մուտքի եւ բրիտանական GCE-ի քննութեանց աշակերտներու մասնակցութեան: Զարկ տուած է դպրոցի արդիականացման՝ մանկավարժական առողջ հիմունքներու վրայ:

Իր պաշտօնի աւարտին դպրոցի հոգաբարձութիւնը զինք շքադրած է ոսկեայ մետալով:

Արար-խորայլեան վեցօրեայ պատերազմէն քիչ ետք ընտանեօք Ամերիկա գաղթեց, հաստատուելով Նիւ Ճրքզի, ուր շարունակեց կրթական գործը ամերիկեան երկրորդական վարժարաններու մէջ կենսաբանութիւն ու քիմիագիտութիւն դասաւանդելով եւ վարչական գործեր ստանձնելով: Նիւ Ճրքզիի Յովնանեան հայկական ամէսօրեայ վարժարանին վերատեսուչ եղած է: Շրջան մը տնօրէնը եղաւ Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութեան:

Նշենք, որ Սայտա եղած շրջանին տեղոյն ազգային վարժարանէն ներս ձրիաբար դասաւանդած է: Ան խորհրդատու անդամ եղաւ ԱՄՆ-ի Արեւելեան ափի ՀԱԳ Ուսանողաց միութեան, անոր սկզբնատրութեան շրջանին:

Ողջութեան դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր տիկինը՝ Սրբուհին, եւ դուստրը:


Պարոն Յակոբ Գասպարեան մահացաւ 7 Հոկտեմբեր 2019-ին, Նիւ Ճրքզի:

Յարգանք իր բարի յիշատակին: Վարձքը կատար վաստակաշատ կրթական մշակին:

Զ.Մ.



† Նախկին երկարամեայ աշակերտ (1965 – 1976), *KTY Engineering-ի* պաշտօնեայ Ռաֆֆի Գրիգորեան (1958 – 2023) մահացած է *Լոս Անճելըսի* մէջ 6 Մարտ 2023-ին յետ անողոր հիւանդութեան:



† 1959-ի շրջանաւարտ եւ Պէյրութի ՀԱԳ-ի Շրջ. միութեան նախկին արեւնասպարտուի Կիկ. Լենա (ծն. Գասարեան) Եարարմեան (1941 – 2023) մահացած է Պէյրութի մէջ 12 Մարտ 2023-ին:

† 1949-ի շրջանաւարտ Կիկ. Լիւսի (ծն. Պասայեան) Միրաբեան (1933 – 2023) մահացած է Քլիվլընդի մէջ (Օհայօ) 5 Մարտ 2023-ին:



† Երկարամեայ նախկին աշակերտուի Կիկ. Աննա Պաղարաւարեան (1960 – 2022) մահացած է 20 Դեկտեմբեր 2022-ին, Պուրճ Համնուրի Հայ տարեցներու տան մէջ:



† ՀԱԳ Շրջ. միութեան նախկին արեւնասպարտուի Կիկ. Զարուհի Եարալեան-Ժամկոչեան (1927 – 2021) մահացած է 19 Նոյեմբեր 2021-ին յետ երկարատեւ հիւանդութեան, *Լոս Անճելըսի* մէջ:

† Յայտարարուող իմացանք 1955 – 1960-ի նախկին աշակերտ Անդրէաս Ճուհուրեանի (1941 – 2020) մահը Փարիզի մէջ 30 Դեկտեմբեր 2020-ին, յետ անողոր հիւանդութեան: Հանգուցեալը երկար տարիներ աշխատած է ՄԱԿ-ի համար Աֆղանիստանի մէջ:

ՃՇԴՈՒՄ

«Լրատու»-ի նախորդ թիւի նուիրատուութիւններ բաժնին մէջ.

Տիկ. Սիլվի Թաթարեան զարմուհին է ողբ. Միւր Ունճեանի:

Տիկ. Նորա Պարուրճեան-Ճղալեան ԱՄՆ կը բնակի:

10.000-ԱԿԱՆ ՏՈՒՆԻ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

Լուս Անճելլոսաբնակ տոքթ. ԼԱՉԱՐԷԹ ՏԱՐԱԳՃԵԱՆ (1970-ի շրջ.) 2023-ի իր տարեկան յատկացումը՝ 10.000 տոլար դպրոց դրկեց իր նախագահած Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան միջոցով:

Ազնիւ բարերարին տարուէ տարի շարունակուող նուիրատուութիւնը գնահատանքով եւ շնորհակալութեամբ ստացանք:

Լուս Անճելլոսաբնակ բարերար տիար ԱԼՊԵՐ ՊԷՉՃԵԱՆ (1956-ի շրջ.) Ամանորին 10.000 տոլարի նուիրատուութիւն մը կատարեց ՀԱԳ-ին, լիբանանեան թղթոսկիի արժեզրկումի այս դժուարին օրերուն հասնելով դպրոցի կարիքներուն:

Այս առաջին անգամը չէ որ մեծայարգ բարերարը կ'օժանդակէ իր հարազատ ՀԱԳ-ին: Իր սրտաբուխ յատկացումը գնահատանքով եւ շնորհակալութեամբ ստացանք:

Տուպայի, Իտալիոյ եւ Հայաստանի մէջ բնակող տեր եւ տիկ. ՅԱՐՈՒԹԻԷՆ ԵՒ ՍԻԼՎԱ (ծնեալ Ղանիմի, 1971-ի շրջ.) ՍԹԱՄՊՈՒԼԻ, դպրոցի հարիւրամեակին առիթով 10.000 տոլարի սրտաբուխ նուիրատուութիւն մը կատարեցին:

Գնահատանքով եւ շնորհակալութեամբ ստացանք ազնիւ ամուլին սրտաբուխ նուիրատուութիւնը:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիւէն ի վեր շնորհակալութեամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները: Բոլոր գումարները ամերիկեան տոլարով են, բացի եթէ նշուած է այլապէս:

ԱՄԱԱ-ԷՆ

Կրթանպաստ (Ա. եւ Բ. շրջան)	16.743
Դպրոցաշէնքի նորոգութիւն	5000
Անմիջական օժանդակութիւն (Ա. շրջան)	7984
Endowment fund (Ա. շրջան)	11.092
Դպրոցի բարեկարգում	4000

ԱՄԱԱ-Ի ՄԻՋՈՑՄԱՐ

Շրջանաւարտ դոկտ. Ճորճ Այնիլեան	1000
իր շրջանաւարտութեան 60-ամեակին առիթով	
Տիկ. Զենի Յովսէփեան	500
Շրջանաւարտ Միհրան Հիւսէնճեան	250
Պր. Յակոբ Խաչատուրեան	200
Շրջանաւարտ տոքթ. Վիգէն Ահարոնեան	100
Շրջանաւարտ Սալբի Բագրատունի	100

ՈՐՊԵՍ ԸՆԴՈՍԱԶՈՒՄ ՊԱՏՈՒԿԱԿԱԼ ՏՆՕՐԵՆԻ ԱՍՏՆՈՐԵԱՆ ԿՈՉԻՆ

Շրջանաւարտ տոքթ. Արմէն Կեօնճեան	2000
Շրջանաւարտ դոկտ. Արա Էթոյեան	1000
Շրջանաւարտ Արփի Սարեան	500
Շրջանաւարտ Կարօ Գասարճեան	250
Շրջանաւարտ Վահէ Աբելեան	100
Շրջանաւարտ Վահէ Վ. Աբելեան	100

Մ.Ա.Հ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՐՄԵ

Ուսուցչակազմի նուէր (Ամանոր)	2925
Ուսուցչակազմի նուէր (Ուսուցչաց օր)	2520
HEKS-ի կողմէ դպրոցներու օժանդակութիւն	2900
Fondation des Cedres	3894

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՖՈՒՏԻՆ

Տիկ. Յասմիկ Հալեպլեան	200
-----------------------	-----

ՀԱԳ-Ի ԱՐԱ ՊԱՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՒՏԻՆ

Ամանորի առիթով	
Տիկ. Սօսի եւ պր. Արմէն Պալեան	100
Արա Պալեանի յիշատակին	
Տիկ. Սօսի Պալեան	100
Պր. Արմէն Պալեան	100
Տոքթ. Արմէն եւ դոկտ. Արաքս Գրիգորեան	100
Տէր եւ Տիկ. Ալեք եւ դոկտ. Շողակ Պալեան	100
Օր.ներ Արշակունիի եւ Լուսին Տէր Խաչատուրեան	2 միլիոն լ.ո.

ԱՅԼ

ՀԲԸՄ-ի Չաւէն Մալրոլեան մրցանակ	2486
Պատուակալ տնօրէնի փափաքով	
Կրթանպաստի ֆոնտին	
Պր. Թոնի Սըմեա	1000
Տէր եւ տիկ. Յակոբ Պապոյեան	100
Տիկ. Լիւսի Պապոյեան-Միրաքեանի մահուան տխուր առիթով	
Տիկնանց օժանդակ մարմինի անդամուհիներ	500.000 լ.ո.
Ողբ. Սիրարփի Դարբինեանի յիշատակին	



ՊԷՅՐՈՒԹ

Յունիս 10 - Կալա Ճաշկերոյթ Hotel Kempinski-Summerland

Յունիս 11 - Յոբելեանական հանդիսութիւն եւ դասական համերգ
Հայ աւետ. Ա. եկեղեցի
Մակագրութիւն դոկտ. Զաւէն Մարրիւեանի յուշերու նոր գիրքին
ՀԱԳ շրջափակ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

Սեպտեմբեր 29 - Բարի գալուստի հանդիպում

Սեպտեմբեր 30 - Կալա Ճաշկերոյթ - Sheraton Universal

հոկտեմբեր 1 - Պաշտամունք

Յաւելեալ տեղեկութիւններու համար գրել aec100years@gmail.com հասցէին

Խմբագիր՝ ՏՆՕՐԵՆ ՂՈՎՏ. ԱՐՄԵՆ ԻՐԻՄԵՇԼԵԱՆ
Խորհրդատուներ՝ ՏԻՄՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՏՈՅԵԱՆ
Եջադրում՝ ՏԻՄՐ ՅԱԿՈԲ ՏԵՒՐՈՅԵԱՆ
ԱՆԻ ՔԵՆՏԵՆԵԱՆ ՊԱՍԵՅ
Ս.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԾԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
P.O. Box 3672-Beirut
Tel: 01 349 816 Fax: 01 751 469
E-mail: A_E_C@cyberia.net.lb
Website: aecbeirut.edu.lb
Facebook: Armenian Evangelical College



ԻՆՍՏԻՏՈՒՏ
 ԳՐԱԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ,
 ԻՍՏԱՆԿԱԼ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԿՆՔԱՆՈՒԹՅԱՆ

**TO KNOW WISDOM AND INSTRUCTION;
 TO PERCEIVE THE WORDS
 OF UNDERSTANDING** PROVERBS 1:2

ԿՆՔԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

100

ԿՆՔԱՆՈՒԹՅԱՆ

